ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

375015. Երևան 15. Գրիգոր Լուսավորչի 13

№ 1595 – Ա « 16 » սեպտեմբերի 2002 թ.

Ձ7 ձևակ.

## «ԴԱՎԻԹ-ՎԱՆՈՒՇ» ՍՊԸ-ԻՆ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԵՎ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՄԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ԲԱՑՕԹՅԱ ՍՐՃԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ի հայտը, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.06.2002թ. հ.18-09/2953 զեկուցագիրը.

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 36 կետի «Ա» ենթակետով, «Դավիթ-Վանուշ» ՍՊԸ-ին (հետագայում կառուցապատող)՝ Փ.Բուզանդի փողոցի և Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցման հարևանությամբ ընկերության կողմից վարձակալության իրավունքով օգտագործվող 20,8քմ մակերեսով տաղավարի /սեփականության վկայական 25.03.2002թ. հ.413866/ վերակառուցման, սպասարկման տարածքի ընդլայնման և բացօթյա սրճարանի կազմակերպման նպատակով լրացուցիչ տրամադրել 350,0քմ մակերեսով հողամաս՝ վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, որի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

2.Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17°հոդվածը և ՀՀ կառավարության 1998թ. հոկտեմբերի 29-ի հ.667 որոշումը՝ հաստատել և կառուցապատողին հանձնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք հանդիսացող նախագծման և շինարարության պարտադիր պայմանները, պահանջները և սահմանափակումները պարունակող Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից մշակված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

3.Լիազորել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը /Ա.Գևորգյան/ Երևանի քաղաքապետի անունից կառուցապատողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, ՝ իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

4. Ընդունել ի գիտություն, որ.

4.1.Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության հետ, գլխավոր հատակագծի թողարկման օրվանից, 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:



4.2.Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և շինարարության /շինաշխատանքներն սկսելու/ թույլտվության հայտի ներկայացման համար սահմանված է մեկ տարի ժամկետ:

4.3.Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ՝ ներկայացնելով շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

5.Պարտավորեցնել կառուցապատողին՝ հատկացված հողամասն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

6.Առաջարկել Կենտրոնի թաղապետարանին (Ա.Զուրաբյան).

6.1.«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. հ.91 որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն կառուցապատողին հանձնել շինարարության /շինաշխատանքներն սկսելու/ թույլտվությունը՝ ապահովելով համապատասխան տեղական տուրքերի գանձման հարցերը:

6.2.Կառուցապատողի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր՝ նախագծով նախատեսված շինարարության ավարտի ժամկետը կառուցապատողի մեղքով խախտվելու դեպքում գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Ս.Կոտոյիկյան)՝ ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

8.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան)՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.98թ. հ.624 որոշման համաձայն կառուցապատողի՝ սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

9.Նախազգուշացնել կառուցապատողին, որ սույն որոշման 6-րդ կետով նախատեսված շինարարության թույլտվությունն ստանալուց հետո, երկու տարվա ընթացքում շինարարական աշխատանքները չսկսելու դեպքում շինարարության թույլտվությունը կճանաչվի առոչինչ:

10.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ-Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

Ռ.Ն ԱԶԱՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1:

№ 2362-Ա „08” հունիսի 201[illegible]

<<ԴԱՎԻԹ ՎԱՆՈՒՇ>> ՍՊԸ-ԻՆ [illegible] ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Դավիթ Վանուշ>> ՍՊԸ-ն դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Մարգարյանի անվան հիվանդանոցի հարևանությամբ գտնվող զուգարան-տաղավարների (անշարժ գույքի իրավունքի գրանցման 03.04.2002թ. h.0083745 վկայական) զբաղեցրած հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի h.2093-Ն որոշման 5-րդ կետով և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային, աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> h.2387-Ն և Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» h.55-Ն և 2011թ. մարտի 15-ի h.192-Ն որոշումներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.05.2011թ. h.18-06/2-12019 եզրակացությունը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին (Արսեն Ամյան)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, <<Դավիթ-Վանուշ>> ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագիր՝ Երևանի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 18-ի h.58 որոշման հիման վրա, Մարգարյանի անվան հիվանդանոցի հարևանությամբ, իրեն պատկանող զուգարան-տաղավարների զբաղեցրած 36.0քմ մակերեսով հողամասի համար 2002 թվականի հունվարի 29-ին կնքված հողամասի վարձակալության h.106/ԳԱ պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու և դրանում փոփոխություններ ու լրացում կատարելու մասին՝ ներառելով պայմանագրի հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) պայմանագրի 16-րդ կետում, նոր պարբերությամբ կատարել հետևյալ լրացումը.

<<Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:>>.

2) պայմանագրի 4.2 ենթակետից հանել «(այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու կապիտալ շինարարություն)» բառերը.

3) պայմանագրի 4.4 ենթակետից հանել <<իսկ ամրակայված անշարժ գույքը կողմերի միջև որոշվող պայմաններով օտարելու վարձատուին>> բառերը.

4) պայմանագրի 8-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի 5 տոկոսը, որը կազմում է 108000 (հարյուր ութ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը կազմում է 1քմ-ը 60000 Հայաստանի Հանրապետության դրամ.».

5) պայմանագիրը լրացնել նոր 29-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<29.Վարձակալված հողամասի օգտագործման նպատակի փոփոխման անհրաժեշտության դեպքում վարձատուն իրավունք ունի նախապես տեղեկացնելով վարձակալին միակողմանիորեն լուծել պայմանագիրը:>>

2.Սույն որոշման 1-ին կետով <<Դավիթ-Վանուշ>> ՍՊԸ-ին պատկանող, անշարժ գույքի իրավունքի գրանցման 03.04.2002թ. h.0083745 վկայականում ամրագրված անշարժ գույքին տրամադրել <<Արգիշտի փողոց, h.29/6>> հասցեն:

3.Տեղեկացնել <<Դավիթ-Վանուշ>> ՍՊԸ-ին, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներով <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, նոտարական վավերացման օրվանից 30-օրյա ժամկետում, ինչպես նաև սույն որոշման 2-րդ կետով անշարժ գույքին տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

4.Հանձնարարել <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՓԲԸ-ին՝ սույն որոշման հիման վրա տրամադրված՝ անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը հնգօրյա ժամկետում տրամադրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ու ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան ստորաբաժանմանը և բաժնին, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի, <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՓԲԸ-ի տնօրենի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Առաքելյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ